

ԱՄՍ 706

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՊԱՐԱԳՐԱՑՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՊԱՐԱԳՐԱՑՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Պարագրաֆ
Ներածություն	
Սույն ԱՄՍ-ի շրջանակները.....	1-2
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.....	3
Նպատակները.....	4
Սահմանումներ.....	5
Պահանջները	
Առողիտորի եզրակացությունում հանգամանքներ լուսաբանող պարագրաֆներ.....	6-7
Առողիտորի եզրակացությունում այլ հանգամանքների պարագրաֆներ.....	8
Հաղորդակցություն կառավարման մարմնի հետ.....	9
Կիրառումը և այլ բացատրական նյութեր	
Առողիտորի եզրակացությունում հանգամանքներ լուսաբանող պարագրաֆ- ներ.....	Ա1-Ա4
Առողիտորի եզրակացությունում այլ հանգամանքների պարագրաֆներ....	Ա5-Ա11
Հաղորդակցություն կառավարման մարմնի հետ.....	Ա12
Հավելված 1: ԱՄՍ-ների ցանկ, որոնք պարունակում են հանգամանքներ լուսաբանող պարագրաֆների պահանջներ	
Հավելված 2: ԱՄՍ-ների ցանկ, որոնք պարունակում են այլ հանգամանքներ պարագրաֆների պահանջներ	

Հավելված 3: Հանգամանքներ լուսաբանող պարագրաֆ պարունակող

աուդիտորական եզրակացության ցուցադրական օրինակ

<<Անկախ աուդիտորական եզրակացությունում հանգամանքները լուսաբանող պարագրաֆներ և այլ հանգամանքների պարագրաֆներ>> աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 706-ը պետք է դիտարկել <<Անկախ աուդիտորի ընդհանուր նպատակները և աուդիտի իրականացումը՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների>> ԱՄՍ 200-ի հետ համատեղ:

Ներածություն

Սույն ԱՄՍ-ի շրջանակները

1. Սույն աուդիտի միջազգային ստանդարտը (ԱՄՍ) կարգավորում է աուդիտորական եզրակացությունում տեղ գտած լրացուցիչ հաղորդակցությունը, երբ աուդիտորը անհրաժեշտ է համարում՝
 - (ա) օգտագործողների ուշադրությունը հրավիրել ֆինանսական հաշվետվություններում բացահայտված կամ ներկայացված հանգամանքի կամ հանգամանքների վրա, որոնք ունեն այնպիսի կարևորություն, որ հիմնարար դեր են խաղում օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների ըմբռնման համար, կամ
 - (բ) օգտագործողների ուշադրությունը հրավիրել ֆինանսական հաշվետվություններում չբացահայտված կամ չներկայացված հանգամանքի կամ հանգամանքների վրա, որոնք տեղին են օգտագործողների կողմից աուդիտի, աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության ըմբռնման համար:
2. Հավելված 1-ը և 2-ը ներկայացնում են այն ԱՄՍ-ները, որոնք պարունակում են աուդիտորական եզրակացությունում հանգամանքներ լուսաբանող պարագրաֆներ կամ այլ հանգամանքի պարագրաֆներ ներառելու որոշակի պահանջներ: Այդ իրավիճակում, սույն ԱՄՍ-ի պահանջները կիրառվում են նման պարագրաֆների ձևավորման և տեղադրման նկատմամբ:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

3. Սույն ԱՄՍ-ն կիրառելի է 2009թ. դեկտեմբերի 15-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար:

Նպատակները

4. Աուդիտորի նպատակն է, ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելուց հետո, երբ ըստ աուդիտորի դատողության, անհրաժեշտություն է առաջացել, աուդիտորական եզրակացությունում լրացուցիչ հստակ հաղորդակցության միջոցով, օգտագործողների ուշադրությունը հրավիրել՝
 - (ա) այն հանգամանքների վրա, որոնք, չնայած պատշաճորեն բացահայտված կամ ներկայացված են ֆինանսական հաշվետվություններում, սակայն ունեն այնպիսի կարևորություն, որ հիմնարար դեր են խաղում օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների ըմբռնման համար, կամ
 - (բ) այլ հանգամանքի վրա, որը տեղին է օգտագործողների կողմից աուդիտի, աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության ըմբռնման համար:

Մահմանումներ

5. Սույն ԱՄՄ-ի առումով ներքոնշյալ տերմիններն ունեն հետևյալ նշանակությունները՝
 - (ա) հանգամանքները լուսաբանող պարագրաֆ՝ աուդիտորական եզրակացության մեջ ներառված պարագրաֆ, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում պատշաճորեն բացահայտված կամ ներկայացված հանգամանքին, որը, սակայն ըստ աուդիտորի դատողության, ունի այնպիսի կարևորություն, որ հիմնարար դեր է խաղում օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների ըմբռնման համար,
 - (բ) այլ հանգամանքներ պարագրաֆ՝ աուդիտորական եզրակացությունում ներառված պարագրաֆ, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում չբացահայտված կամ չներկայացված հանգամանքին, որը, սակայն, ըստ աուդիտորի դատողության, տեղին է օգտագործողների կողմից աուդիտի, աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության ըմբռնման համար:

Պահանջները

Աուդիտորի եզրակացությունում հանգամանքներ լուսաբանող պարագրաֆներ

6. Եթե աուդիտորը համարում է, որ անհրաժեշտ է օգտագործողների ուշադրությունը հրավիրել ֆինանսական հաշվետվություններում բացահայտված կամ ներկայացված հանգամանքի վրա, որը ունի այնպիսի կարևորություն, որ

հիմնարար դեր է խաղում օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների ըմբռնման համար, ապա աուդիտորը պետք է աուդիտորական եզրակացությունում ներառի հանգամանքները լուսաբանող պարագրաֆ, եթե աուդիտորը ձեռք է բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ, որ հանգամանքը ֆինանսական հաշվետվություններում էականորեն խեղաթյուրված չէ: Նման պարագրաֆը պետք է հղում կատարի միմիայն ֆինանսական տեղեկատվությունում բացահայտված կամ ներկայացված տեղեկատվությանը (հղում՝ պար. Ա1-Ա2):

7. Եթե աուդիտորը աուդիտորական եզրակացությունում ներառում է հանգամանքները լուսաբանող պարագրաֆ, ապա աուդիտորը պետք է՝
 - (ա) այն աուդիտորական եզրակացությունում տեղադրի անմիջապես կարծիքի պարագրաֆից հետո,
 - (բ) օգտագործի <<Հանգամանքների լուսաբանում>> կամ այլ պատշաճ վերնագիր,
 - (գ) պարագրաֆում հստակ հղում տա լուսաբանվող հանգամանքին և ֆինանսական հաշվետվությունում տվյալ հանգամանքը ամբողջապես նկարագրող բացահայտմանը, և
 - (դ) նշի, որ հանգամանքի լուսաբանումը չի ձևափոխում աուդիտորի կարծիքը (հղում՝ պար. Ա3-Ա4):

Աուդիտորի եզրակացությունում այլ հանգամանքներ պարագրաֆ

8. Եթե աուդիտորը համարում է, որ անհրաժեշտ է օգտագործողների ուշադրությունը հրավիրել ֆինանսական հաշվետվություններում չբացահայտված կամ չներկայացված հանգամանքի վրա, որը, սակայն ըստ աուդիտորի դատողության, տեղին է օգտագործողների կողմից աուդիտի, աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության ըմբռնման համար, և որը չի արգելված իրավական ու կարգավորող պահանջներով, ապա աուդիտորը կարող է աուդիտորական եզրակացությունում ներառել <<Այլ հանգամանքներ>> կամ այլ համապատասխան վերնագրով պարագրաֆ: Աուդիտորը այդ պարագրաֆը պետք է աուդիտորական եզրակացությունում ներառի անմիջապես կարծիքի պարագրաֆից և հանգամանքները լուսաբանող պարագրաֆից հետո, եթե այդպիսիք կան, կամ աուդիտորական եզրակացության մեկ այլ տեղում, եթե այլ հանգամանքների բովանդակությունը վերաբերում է այլ իրավական ու կարգավորող պահանջների բաժնին (հղում՝ պար. Ա5-Ա11):

Հաղորդակցություն կառավարման մարմնի հետ

9. Եթե աուդիտորը ակնկալում է աուդիտորական եզրակացությունում ներառել հանգամանքները լուսաբանող կամ այլ հանգամանքներ պարագրաֆ, ապա պետք է կառավարման մարմնին հաղորդի ակնկալվող պարագրաֆների և նրանց տեքստի վերաբերյալ (հղում՝ պար. Ա12):

Կիրառումը և այլ բացատրական նյութեր

Աուդիտորի եզրակացությունում հանգամանքներ լուսաբանող պարագրաֆներ

Իրավիճակներ, երբ հանգամանքներ լուսաբանող պարագրաֆը կարող է անհրաժեշտ լինել (հղում՝ պար. 6)

Ա1. Իրավիճակների օրինակներ, երբ աուդիտորը կարող է համարել, որ հանգամանքներ լուսաբանող պարագրաֆը անհրաժեշտ է՝

- անորոշություն՝ կապված բացառիկ դատական հայցի կամ կարգավորող մարմինների գործողությունների ապագա արդյունքի հետ,
- ֆինանսական հաշվետվությունների վրա համատարած ազդեցություն ունեցող նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի (օրինակ, նոր ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի) վաղաժամկետ կիրառումը մինչև նրա ուժի մեջ մտնելը (թույլտվության առկայության դեպքում),
- աղետ, որը ունեցել է կամ շարունակում է ունենալ նշանակալից ազդեցություն կազմակերպության ֆինանսական վիճակի վրա:

Ա2. Հանգամանքները լուսաբանող պարագրաֆների լայնածավալ օգտագործումը նվազեցնում է աուդիտորի կողմից տվյալ հանգամանքների հաղորդակցության արդյունավետությունը: Ի լրումն, հանգամանքները լուսաբանող պարագրաֆում ավելի շատ տեղեկատվության ընդգրկումը, քան բացահայտված կամ ներկայացված է ֆինանսական հաշվետվություններում, կարող է նշանակել, որ տվյալ հանգամանքը պատշաճորեն չի բացահայտվել կամ ներկայացվել, հետևաբար, պարագրաֆ 6-ը սահմանափակում է հանգամանքները լուսաբանող պարագրաֆի կիրառումը միմիայն ֆինանսական հաշվետվություններում բացահայտված կամ ներկայացված տեղեկատվությամբ:

Աուդիտորական եզրակացությունում հանգամանքները լուսաբանող պարագրաֆի ներառումը (հղում՝ պար. 7)

Ա3. Հանգամանքները լուսաբանող պարագրաֆի ներառումը աուդիտորական եզրակացությունում չի ազդում աուդիտորական կարծիքի վրա: Հանգամանքները լուսաբանող պարագրաֆը չի փոխարինում՝

(ա) որոշակի իրավիճակներում աուդիտորի կողմից ձևափոխված կարծիք, բացասական կարծիք կամ կարծիքից հրաժարում արտահայտելու պահանջին (տես՝ ԱՄՄ 705¹), կամ

(բ) ֆինանսական հաշվետվություններում ղեկավարությունից պահանջվող բացահայտումներին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքի:

¹ ԱՄՄ 705, <<Անկախ աուդիտորական եզրակացությունում կարծիքի ձևափոխում:>>

Ա4. Հավելված 3-ում ընդգրկված օրինակում ձևափոխված կարծիքով աուդիտորական եզրակացությունը ներառում է հանգամանքները լուսաբանող պարագրաֆ:

Աուդիտորի եզրակացությունում այլ հանգամանքների պարագրաֆ (հղում պար. 8)

Իրավիճակներ, երբ այլ հանգամանքներ պարագրաֆը կարող է անհրաժեշտ լինել

Վերաբերում է օգտագործողների կողմից աուդիտի վերաբերյալ պատկերացումներին

Ա5. Բացառիկ իրավիճակներում, երբ աուդիտորը չի կարող հրաժարվել առաջադրանքից, չնայած որ ղեկավարության կողմից աուդիտի շրջանակների սահմանափակումների պատճառով բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու անկարողության հնարավոր ազդեցությունը համատարած է², աուդիտորը կարող է համարել, որ անհրաժեշտ է աուդիտորական եզրակացությունում ներառել այլ հանգամանքներ պարագրաֆ՝ բացատրելու համար, թե ինչու՞ աուդիտորը չէր կարող հրաժարվել առաջադրանքից:

Վերաբերում է օգտագործողների կողմից աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության վերաբերյալ պատկերացումներին

Ա6. Տվյալ իրավական դաշտում գործող իրավական ու կարգավորող կամ ընդունված մոտեցումները կարող են աուդիտորից պահանջել կամ թույլատրել մանրամասնել այն հանգամանքները, որոնք լրացուցիչ պարզաբանումներ են տրամադրում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ աուդիտորի պատասխանատվության կամ աուդիտորական եզրակացության վերաբերյալ: Եթե տեղին է, կարելի է օգտագործել մեկ կամ մի քանի ենթավերնագրեր *Այլ հանգամանքներ* պարագրաֆի բովանդակության նկարագրման համար:

Ա7. *Այլ հանգամանքներ* պարագրաֆը չի առնչվում այն իրավիճակներին, երբ աուդիտորը, բացի ԱՄՄ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պատասխանատվությունից, ունի նաև այլ հաշվետվության պատասխանատվություն (տես ԱՄՄ 700-ում ³ <<Այլ հաշվետվության պատասխանատվություն>> բաժինը), կամ երբ աուդիտորից պահանջվել է իրականացնել և ներկայացնել այլ որոշակի ընթացակարգեր կամ արտահայտել կարծիք որոշակի հանգամանքների վերաբերյալ:

Մեկից ավելի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

² Տես ԱՄՄ 705-ի պարագրաֆ 13բ.ii տվյալ իրավիճակի քննարկման վերաբերյալ:

³ ԱՄՄ 700, <<Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում>>, պարագրաֆ 38-39:

Ա8. Կազմակերպությունը կարող է պատրաստել ֆինանսական հաշվետվությունների փաթեթ՝ համաձայն ընդհանուր նպատակների շրջանակի (օրինակ՝ ազգային շրջանակի), և ֆինանսական հաշվետվությունների մեկ այլ փաթեթ՝ համաձայն մեկ այլ ընդհանուր նպատակների շրջանակի (օրինակ՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների), և աուդիտորի առջև դնել առաջադրանք՝ ներկայացնել եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների երկու փաթեթերի վերաբերյալ: Եթե աուդիտորը համարում է, որ շրջանակները տվյալ իրավիճակում կիրառելի են, աուդիտորը կարող է աուդիտորական եզրակացությունում ներառել *Այլ հանգամանքներ* պարագրաֆ, նշելու, որ նույն կազմակերպությունը պատրաստել է ֆինանսական հաշվետվությունների մեկ այլ փաթեթ՝ համաձայն մեկ այլ ընդհանուր նպատակների շրջանակի, և որ աուդիտորը ներկայացրել է եզրակացություն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նույնպես:

Աուդիտորական եզրակացության օգտագործման կամ բաշխման սահմանափակումներ

Ա9. Հատուկ նպատակներով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները կարող են պատրաստված լինել ընդհանուր նպատակների շրջանակի համաձայն, քանի որ նախատեսված օգտագործողները որոշել են, որ այդ ֆինանսական հաշվետվությունները բավարարում են ֆինանսական տեղեկատվության իրենց պահանջները: Քանի որ աուդիտորի եզրակացությունը նախատեսված է որոշակի օգտագործողների համար, աուդիտորը կարող է անհրաժեշտ համարել տվյալ իրավիճակում ներառել *Այլ հանգամանքներ* պարագրաֆ, նշելով, որ աուդիտորական եզրակացությունը նախատեսված է միմիայն նախատեսված օգտագործողների համար և չպետք է բաշխվի կամ օգտագործվի այլ կողմերի կողմից:

Աուդիտորական եզրակացությունում Այլ հանգամանքներ պարագրաֆի ներառում

Ա10. *Այլ հանգամանքներ* պարագրաֆի բովանդակությունը հստակորեն արտահայտում է այն, որ նման այլ հանգամանքները պարտադիր չէ ներկայացնել կամ բացահայտել ֆինանսական հաշվետվություններում: *Այլ հանգամանքներ* պարագրաֆը չի ներառում տեղեկատվություն, որը աուդիտորին արգելված է գաղտնագերծել՝ համաձայն իրավական ու կարգավորող կամ այլ մասնագիտական ստանդարտների, օրինակ՝ տեղեկատվության գաղտնիության վարքի նորմերի: Այլ հանգամանքների պարագրաֆը նմանապես չի ներառում տեղեկատվություն, որը ղեկավարությունը պարտավոր էր բացահայտել:

Ա11. Այլ հանգամանքների պարագրաֆի տեղադրումը կախված է հաղորդվող տեղեկատվության բնույթից: Երբ *Այլ հանգամանքներ* պարագրաֆը ներկայացվում է, օգտագործողների ուշադրությունը հրավիրելու ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով, ապա պարագրաֆը տեղադրվում է անմիջապես կարծիքի

պարագրաֆից և հանգամանքները լուսաբանող պարագրաֆներից հետո, եթե այդպիսիք կան: Եթե *Այլ հանգամանքներ* պարագրաֆը ներկայացվում է օգտագործողների ուշադրությունը հրավիրելու աուդիտորական եզրակացությունում ներառված այլ եզրակացության պատասխանատվության վրա, ապա պարագրաֆը կարող է որպես ենթավերնագիր ներառվել <<Եզրակացություն այլ իրավական ու կարգավորող պահանջների վերաբերյալ>> բաժնում: Այլ դեպքերում, երբ դա տեղին է աուդիտորի ողջ պատասխանատվության առումով կամ օգտագործողների կողմից աուդիտորական եզրակացության ըմբռնման առումով, այլ հանգամանքների պարագրաֆը կարող է ներառվել որպես առանձին բաժին՝ հաջորդելով *Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ* և *Եզրակացություն այլ իրավական ու կարգավորող պահանջների վերաբերյալ* բաժիններին:

Հաղորդակցություն կառավարման մարմնի հետ (հղում՝ պար. 9)

Ա.12. Նման հաղորդակցությունը կառավարման մարմնին հնարավորություն է տալիս տեղյակ լինելու աուդիտորի կողմից աուդիտորական եզրակացությունում մատնանշվող որոշակի հանգամանքների բնույթի վերաբերյալ, և աուդիտորից անհրաժեշտության դեպքում ստանալու լրացուցիչ պարզաբանումներ: Երբ որոշակի հանգամանքի վերաբերյալ աուդիտորական եզրակացությունում *Այլ հանգամանքներ* պարագրաֆը կրկնվում է յուրաքանչյուր հաջորդ առաջադրանքում, աուդիտորը կարող է համարել, որ անհրաժեշտ չէ ամեն անգամ այդ մասին հաղորդել կառավարման մարմնին:

Հավելված 1 (հղում՝ պար. 2) ԱՄՄ-ների ցանկ, որոնք պարունակում են հանգամանքներ լուսաբանող պարագրաֆների պահանջներ

Սույն հավելվածը որոշակի է դաձնում 2009թ. դեկտեմբերի 15-ից և դրանից հետո սկսվող ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ կիրառվող այլ ԱՄՄ-ներում առկա պարագրաֆները, որոնք պահանջում են աուդիտորին որոշակի իրավիճակներում աուդիտորական եզրակացությունում ներառել հանգամանքներ լուսաբանող պարագրաֆ: Նշված ցանկը չի փոխարինում ԱՄՄ-ների պահանջների, կից կիրառությունների և լրացուցիչ բացատրական նյութերի ուսումնասիրությանը:

- ԱՄՄ 210, <<Աուդիտորական առաջադրանքի պայմանների համաձայնեցումը>> – պարագրաֆ 19բ,
- ԱՄՄ 560, <<Հետագա դեպքեր>> – պարագրաֆներ 12բ և 16,
- ԱՄՄ 570, <<Կազմակերպության գործունեության անընդհատությունը>> – պարագրաֆ 19,
- ԱՄՄ 800, <<Հատուկ նկատառումներ - հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ>> – պարագրաֆ 14:

Հավելված 2 (հղում պար. 2) ԱՄՄ-ների ցանկ, որոնք պարունակում են այլ հանգամանքներ պարագրաֆների պահանջներ

Սույն հավելվածը որոշակի է դարձնում 2009թ. դեկտեմբերի 15-ից և դրանից հետո սկսվող ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ կիրառվող այլ ԱՄՄ-ներում առկա պարագրաֆները, որոնք պահանջում են աուդիտորին որոշակի իրավիճակներում աուդիտորական եզրակացությունում ներառել այլ հանգամանքներ պարագրաֆ: Նշված ցանկը չի փոխարինում ԱՄՄ-ների պահանջների, կից կիրառությունների և լրացուցիչ բացատրական նյութերի ուսումնասիրությանը:

- ԱՄՄ 560, <<Հետագա դեպքեր>> – պարագրաֆներ 12բ և 16,
- ԱՄՄ 710, <<Համադրելի տեղեկատվություն – համապատասխան թվային տվյալներ և համադրելի ֆինանսական հաշվետվություններ>> – պարագրաֆներ 13-14, 16-17 և 19,
- ԱՄՄ 720, <<Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ պարունակող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը>>- պարագրաֆ 10ա:

Հավելված 3 (հղում պար. 4) Հանգամանքներ լուսաբանող պարագրաֆ պարունակող աուդիտորական եզրակացության ցուցադրական օրինակ

Հանգամանքները ներառում են հետևյալը՝

- կազմակերպության ղեկավարության կողմից ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի աուդիտ,
- աուդիտորական առաջադրանքի պայմանները արտացոլում են ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվության նկարագրությունը ներառված ԱՄՄ 210-ում,⁴
- առկա է անորոշություն առկա բացառիկ դատական հայցի վերաբերյալ,
- ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքից շեղումը առաջացրել է կարծիքի ձևափոխում,
- ի լրումն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի, աուդիտորը ունի այլ հաշվետվության պատասխանատվություն՝ պահանջվող տեղական օրենքով:

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[Համապատասխան հասցեատեր]

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ⁵

⁴ ԱՄՄ 210, <<Աուդիտորական առաջադրանքի պայմանների համաձայնեցումը>>:
⁵ Ենթավերնագիրը՝ <<Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ>> անհրաժեշտ չէ այն դեպքում, եթե երկրորդ ենթավերնագիրը՝ <<Եզրակացություն այլ իրավական ու կարգավորող պահանջների վերաբերյալ>>, կիրառելի չէ:

Մեր կողմից իրականացվել է ԱԲԳ Ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 20X1թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկատվություն:

Ղեկավարության⁶ պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար⁷: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման⁸ համար կիրառվող ներքին վերահսկողության

⁶ Կամ տվյալ իրավական դաշտում ընդունելի այլ տերմին:

⁷ Եթե ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների կազմման համար, որոնք տալիս են ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ և իրական պատկերը, ապա կարող է գրվել՝ «Ղեկավարությունը պատասխանատու է պատրաստել ֆինանսական հաշվետվությունները, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկերը համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, և այդ նպատակով...»

⁸ Ծանոթագրություն 7-ի պարագայում կարելի է գրել. «Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման համար, որոնք տալիս են

գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար⁹: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ընկերության կարճաժամկետ իրացվելի արժեթղթերը հաշվապահական հաշվեկշռում հաշվառված են xxx գումարով: Ղեկավարությունն այդ արժեթղթերը չի գնահատել իրական արժեքով, այլ ներկայացրել է սկզբնական արժեքով, ինչը հանդիսանում է շեղում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներից: Ընկերության հաշվապահական տվյալները մատնանշում են, որ եթե ղեկավարությունն այդ արժեթղթերը գնահատեր իրական արժեքով, ապա ընկերությունը պետք է ֆինանսական արդյունքների հաշվետվությունում ճանաչեր հաշվետու տարվա չիրացված վնաս xxx գումարի չափով: Հաշվապահական հաշվեկշռում 20X1թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի ընթացիկ արժեքը պետք է նվազեցվեր վերոնշված գումարով, և շահութահարկը, գուտ շահույթը և սեփական կապիտալը պետք է համապատասխանաբար նվազեցվեին xxx, xxx և xxx գումարներով:

Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում (կամ, տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը) 20X1թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԲԳ ընկերության ֆինանսական վիճակը, և այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքների լուսարանում

Ճշմարիտ և իրական պատկերը, այլ ոչ թե Ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:>>

⁹ Այն դեպքում, երբ աուդիտորը, ի լրումն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի, պարտավոր է ներկայացնել նաև կարծիք ներքին վերահսկողության վերաբերյալ, այդ նախադասությունը կարելի է ձևակերպել այսպես. <<Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման համար:>> Ծանոթագրություն 7-ի պարագայում կարելի է գրել. <<Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկերը:>>

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն X-ի վրա, որը վերաբերվում է ԱԲԳ ընկերության դեմ հարուցված դատական հայցի արդյունքի անորոշությանը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

Եզրակացություն այլ իրավական ու կարգավորող պահանջների վերաբերյալ

[Աուդիտորական եզրակացության սույն բաժինը, ձևը և բովանդակությունը, կախված են աուդիտորի այլ հաշվետվողականության պարտականությունների բնույթից:]

[Աուդիտորի ստորագրությունը]

[Աուդիտորի եզրակացության ամսաթիվը]

[Աուդիտորի հասցեն]